Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-761-11.11.2009-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի (2 մայիսի 2001թ.) հոդված 7-ը լրացնել նոր 8-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«8. Սահմանել, որ՝

1.Քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը, սեփականատիրոջ նախաձեռնությամբ, սահմանված կարգով փոփոխելու դեպքում, բացառությամբ՝ ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների և ձկնաբուծական արհեստական լճակների համար օգտագործվող հողամասերի, հողամասի սեփականատերը ըստ գույքը գտնվելու վայրի, եռամսյա ժամկետում համայնքային բյուջե է մուծում հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է քան մինչև փոփոխումը:

2. Ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների և ձկնաբուծական արհեստական լճակների համար օգտագործվող հողամասերի սեփականատերերը հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը համայնքային բյուջե են մուծում մեկ տարվա ժամկետում, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքը ավելի բարձր է քան մինչև փոփոխումը:

3. Մինչև 500 քառակուսի մետր ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների և մինչև 1000 քառակուսի մետր ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման համար օգտագործվող հողամասերի կադաստրային արժեքների տարբերության վճարում չի կատարվում:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին»

ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Արդյունքը
նախագծի հեղինակներ	Նախագծի 1-ին հոդվածի նոր 8-րդ մասի բովանդակությունը սահմանել որպես 8-րդ մասի 1-ին կետ: «Համապատասխան » բառը փոխարինել «համայնքային» բառով:	Ընդունվել է
նախագծի հեղինակներ	Նախագծի 1-ին հոդվածում սահմանված `8-րդ մասում ավելացնել նոր 2-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ «Ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների և ձկնաբուծական արհեստական լճակների համար օգտագործվող հողամասերի սեփականատերերը հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը համայնքային բյուջե են մուծում մեկ տարվա ժամկետում, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքը ավելի բարձր է քան մինչև փոփոխումը։»:	Ընդունվել է
նախագծի հեղինակներ	Նախագծի 1-ին հոդվածում սահմանված `8-րդ մասում ավելացնել նոր 3-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ «Մինչև 500 քառակուսի մետր ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների և մինչև 1000 քառակուսի մետր ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման համար օգտագործվող հողամասերի կադաստրային արժեքների տարբերության վճարում չի կատարվում:	Ընդունվել է